



ՀԵՌԱԿԱ՝ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ
ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 +
191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

03 մարտի 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀՀ փոխվարչապետ

Տ. Խաչատրյան

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Դ. Խոդաթյան

ՀՀ էկոնոմիկայի նախարար

Գ. Պապոյան

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

Հ. Սիմոնյան

ՀՀ արդարադատության նախարար

Ս. Գալստյան

ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար

Ս. Թովմասյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող)

Ք. Ղալեյան

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությանը,

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի

շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող տեղակալ)

Ա. Փամբուխյան

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությանը)

Ա. Բաբայան

«Ճանապարհային ղեկարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն

Ա. Զոհրաբյան

Խորհրդի նիստն անցկացվել է հեռակա՝ գրավոր հարցման կարգով: ՀՀ փոխվարչապետի գրասենյակից ս.թ. փետրվարի 17-ի թիվ N 03.1/03.62/5115-2025 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել է օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկվելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

Օրակարգային 1-ին հարց՝ Եվրասիական Կայունացման և Զարգացման Հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող Քաջարանի թունելի շինարարության ծրագրի

շրջանակներում շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցությային գործընթացի վերաբերյալ:

Որոշվեց՝

1. Հաստատել Քաջարանի թունելի շինարարության ծրագրի շրջանակներում շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցությային փաստաթղթերը:
2. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենին՝ Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի կողմից մրցությային փաթեթի հաստատումը ստանալուց հետո սկսել Քաջարանի թունելի շինարարության ծրագրի շրջանակներում շուրջ 7 կմ երկարությամբ Քաջարանի թունելի շինարարության և շուրջ 4 կմ երկարությամբ թունելին մոտեցնող ճանապարհների վերակառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցությային գործընթացը: Արդյունքները ներկայացնել Խորհրդին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ**

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ